Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 23 ԳԻՆ 5 ՂՐՈՒՇ 27 ՕԳՈՍՏՈՍ 1922

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

HAÏ SCOUT

ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ.Ի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒ

ARMENIA NUMBER

Հասցէ՝ Խորասանճեանց խան
Սիրքէճի, Կ. Պոլիս

Adresse, Khorassandjian Han
Constantinople, Sirkédji

ՀԱՅՐԵՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Պ. ՎԱՀԱՆ ՋԵՐԱԶԷՆ

Ալեքսանդրապոլ 7 օգոստոս

ՍԻՐԵԼԻ ՏՂԱՔ

Ձեր կողմէ ղրկուած սկաուտական լուսանկարները ստացանք։ Ճիշտ այդ բոպէին, սկաուտներուս բանջարանոցէն քաղուած մեր առաջին վարունգները կը ճաշակէինք, ես ու օգնականս Ժորժ (Զաքէոս) Մարտիկեանը։

Մտածեցինք թէ ի՞նչքան լաւ կը լինէր եթէ հնարաւորութիւն ունենայինք այս պտուղներէն ղրկելու ձեզի։

Լուսանկարները տարի ննջարան, տղաքս թափուեցան գլխուս և մէկիկ մէկիկ հարիւրաւոր ձեռքերէ անցան։ Խեղճ տղերքը հիացան տեսարաններուն և կը հարցնէին։ «Պարոն Ջան, մեզ ի՞նչ պիտի տանիս Պոլիս, հա՞ Պարոն Ջան...»։

Սակայն ես ու Ժորժիկը խորին մտահոգութեամբ դիտեցինք որ քառթերուն վրայ զարնուած կնիքը մեր անուանան Մասիսը չ'էր, այլ երեք մասի բաժնուած նշան մը։

Այս տեղ ամէն օրահի ճակտին, «Բարձրացիր Բարձրացուր»ին գունագեղ պատկերները կը փայլին, մինչ դուք, գէթ այդպէս կը հետեւցընեմ, վաղ էք անցեր այն տարէն, որ ջրհեղեղի տակ չէ մնացեր, և որ արեան տակ ալ չի պիտի մնայ։

Վերջապէս դուք աւելի լաւ գիտէք(*)

* * *

Մենք շատ լաւ ենք։ Կը բարձրանանք ու կը բարձրացնենք։ Ձ'եմ ուզեր շատ խօսիլ։ Մեր մասին հարցում ուղղեցէք նամակիս հետ եկող ամերիկացի քննիչներուն։

Ապարդեանները ոչինչ չ'ենք ստացո՛ր, ոչ «Հայ Սկաուտ,» ոչ նշանակ, ոչ Հ. Մ. Ը. Մ.ի նշան, ոչ այս, ոչ այն։ Աչքէ հեռու, սրտէ հեռու։ Եւ սակայն եթէ տեսնայիք . . . Օր մը կը տեսնաք, բայց պզտիկ չի մնաք . . .։

Անցեալները Թիֆլիսի սկաուտները եկան մեզ այցելութեան, և անցան Երեւան, որտեղէն վերադարձին երեք օր մեզի հետ պիտի ըլլան։ 60 սկաուտ էին, 20 սկաուտուհի և 10 խմբապետ։ Ժամանակը քիչ էր և շուտ անցաւ։

Անոնց ուղղութիւնը ցուցադրական էր (բուրքեր, հնարքներ, եւն.), մինչ մերոնցը զուտ մարմնակրթական։ Մերոնց միօրինակ, մաքուր, կայտառ երեւոյթէն իրենք խորունկ տպաւորութիւն կրեցին։ Գեղեցիկ դրօշներ ունէին, որոնցմէ մենք զուրկ ենք, որովհետեւ կտոր չ'ունինք, շատ դրօշներու, ճակատներու, կուրծքերու վրայ, մեր նշանակը ընդելուզուած էր պօլշեւիկեան դինանշանին (մուրճ ու մանգաղ) և կարմիր աստղին հետ։

Ալէքսանդրապօլի քաղաքի սկաուտներն ալ եկած էին։ Դրօշակ չ'ունին, «բարձրացիր բարձրացուր»ը եասախ է։ «Պատգամ» (պատանի գոմունիստ) անունը կը կրեն, և երկու մատով կը բարեւեն, որովհետեւ սկաուտական երդումին առաջին յօդուածը չ'են ընդունիր, տղաքս երկու մատով բարեւը մերժեցին առնել....

Առ այժմ, Պոլիս վերադարձս ցորչափ ինձմէ կախուած է, միտք չ'ունիմ։ Ուրիշ խնդիր, եթէ տղաքս ալ հետս բերեմ. Բայց Պոլիսէն ալ անդին կ'անցնինք, որովհետեւ լուսադոյն ապագայ խոստացուած է մեզի.

Այս պայմաններու մէջ, ես ալ շատ լաւ եմ, հոգիով ու մարմնով երիտասարդացած։

* * *

23 Օգոստ.

Երեւան երթալուս առթիւ, ծանօթացայ այնտեղի սկաուտական դրութեան, որ շատով մեծ համեմատութիւններ պիտի ստանայ՝ ամերիկացիներու աչակցութեան շնորհիւ։ Թերեւս մինչեւ 100) հատ որբանոցային սկաուտներ հասնին։ 5րդ որբանոցին մէջ տուի կեանքիս առաջին դասախօսութիւնը։ Եւ որովհետեւ ես չ'էի կարող հաշտուիլ այստեղի ձեռնարկս թողնելու և Երեւան մնալու մտքին հետ, շտապ կերպով գրեցի Եղնիկին որ անմիջապէս թաւրիզէն գայ և գործը ստանձէ, հակառակ պարագային ինքնակոչները շատ են։

Երեւանի որբ սկաուտներուն վրայ M. Dewis անունով ամերիկացի մը կայ, որ շատ լուսամիտ, համակրելի և համեստ անձնաւորութիւն է, և շատ ժողովրդական՝ տղոց մօտ։ Սակայն մեր լիզուին անտեղեակ լինելը անհրաժեշտ կ'ընէ որ հայ մարդիչ մը գործակցի իրեն, և պարզ է որ Եղնիկէն լաւը տրամադրելի չէ։

Մինչեւ անոր գալը, օգնականս Ժորժը ղրկեցի Երեւան, երեք սկաուտներու հետ, որպէսզի հոկէ կազմակերպութեան և մար-

(*) Մեր սիրելի Զերազը սխալի մը զոհ կ'երթայ Արարատակիր նշանակը ջնջուած կարծելով. այդ նշանակը կայ ու կը մնայ հայ սկաուտի ճակտին վրայ։ (Տ.Խ.)

զանքին։ Երբ վերադառնայ, նորէն ես պիտի երթամ 10 15 տղաներով, փորձեր կատարելու և մարմնակրթական ցուցմունքներ տալու համար և այսպէս շարունակաբար մինչեւ որ եղնիկը գայ։

Պէյրն-Բաուլրի նամակը հանդիսաւորապէս կարդացուեցաւ և պատին վրայ ցուցադրուեցաւ մեր ընթերցարանին մէջ։

Մեզ այցելող զանազան ամերիկացի քննիչներն ալ լաւ տպաւորուեցան, և խոստացած են ի նպաստ մեզ յուզել և կապ հաստատել տալ ամերիկայի սկաուտական շրջանները։

Հայաստանի արտա-որբանոցային սկաուտական դրութիւնը կատակերգական է։

Մեր տղաքը խորունկ հիասթափութիւն կիներին տեսնելով որ ստացուած նոր թերթերուն մէջ ակնարկութիւն մը իսկ չկար իրենց մասին։ Թերեւս օտար թերթերէն թարգմանելով քիչ տեսնէն դրէք մեր մասին։

Վարագը կը չնորհաւորեմ իր հրաշալի գրքոյկին համար։ Ֆութպոլի այսքան դործնական դասագիրք, ուրանդ վճռական պատասխան տրուած է խաղին veteranները հիասքրքրող զանազան կնճռոտ պարադաներուն տակիւ, և ուրանդ ֆութպոլիստներու մեծ պատուհաս օֆ սայտի մասին այսքան յստակ ու մատչելի ծանօթութիւններ կան, դեռ ոչ մի տեղ չեմ պատահած։ Ես վստահ եմ որ այս գրքոյկը դարագլուխ մը պիտի բանայ հայկական ֆութպոլին համար, և դաշտին վրայ չուտով զդալի պիտի լինին այն դերազանց հասկացողութիւնները խաղին նրբութիւններուն մասին, զորս այս գիրքը այնքան պարզ դիծերով յաջողած է ներկայացնել ընթերցողին։

Ապրիս Վարագ, արդէն մեր սկաուտանոցին մէջ ծանօթ դէմք մըն ես։

Խնդրեմ փութացուցէք գունաւոր կտորներ, դրօշակներու համար, նաեւ բոմբ մը, օրինակն գունտ մը (7 k 250), երեք ֆութպոլ։ Պէյդպոլի գնդակներ մրայն և Պասքէթպոլի գնդակներ ստացանք վերջերս ամերիկայէն։ Արնտուկները բացուած էին, և շատ բան վերցուած։

Ց. Դ. Անցեալ օր գրական-թատերական երեկոյթ տուինք, շատ յաջող։ Ներկայացուցինք «Պաղտասար Ադրոր», սկաուտակ ն արտասանութիւններ, եւն։ Ցառաջիկայն՝ «Մեծապատիւ մուրացկանները»։

Կազմի-բաստ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԻԿ

Այստեղ եկան, 8—10 օր առաջ, Հ. Օ. Մ.ի պատուիրակներէն Պ. Պ. Նազարէթեան և Մալումեան, որոնք քեզմէ և իմ այլ սիրելիներէս նամակներ և տեղեկութիւններ բերելէ զատ, բերին նաեւ Տօքթ. Մութաֆեանի նամակը և և տեղակալ Զալխուշեանի պատրաստել տուած դեղերը։

Որովհետեւ Պրն. Արշակ Սաֆրաստեանի գալուստն ու անմիջական մեկնումը միաժամանակ լսեցի, ժամանակ չպիտի ունենամ այս անգամ մանաւոր նամակներ գրելու, իմ շնորհակալութիւնս յայտնելու համար։ Մինչ այդ, վստահ եմ որ դուն սիրով յանձն պիտի առնես իմ կողմէս իմ երախտիքս յայտնել այդ ազնիւ անձնաւորութիւններուն, ինձ հանդէպ իրենց ցոյց տուած համակրանքին ու հոգածութեան համար։

Վերջապէս դեղերը առի, և երբ կարողանամ աւելորդ ժամանակ գտնել Տօքթ. Մութաֆեանի և այլոց պատուէրները գործադրութեան դնելու, ներարկումը պիտի ընել տամ։ Իսկ առ այժմ, և բաւական ատենէ ի վեր առողջութիւնս շատ լաւ է, և իմ մէջ այս երկու ուրիւները իրարու հետ շատ մօտիկ ազգական են, և դոլբուխ դոլբուխի կը պարտին իրարու հետ։ Սա ալ ըսեմ որ դեռ նոր եկայ օդափոխութենէ։ Հապա՝, չի վախնաս։ Տէրէյիշէր գացի, երեք շարաթ նստայ ու եկայ, ալէմ-տագիի պէս տեղ մրն է անարժանարար։

Պրն. Սաֆրաստեանը անտարակոյս քեզ պիտի տեսնայ ու խօսի, այնպէս որ շատ բան չի մնար գրելու։

Սկաուտներս շատ ու շատ առաջ գացած են ու կ'երթան։ Անդին համակրանք և համակրանքի դրական արտայայտութիւններ կը վայելենք, Պրն. Արշակը թող պատմէ։ Եթէ քունս ներէ, աւելի երկար կը գրեմ։

Թերեւ ձմեռուան յաջորդող վաղաժամ և հրաշալի գարուն մը։ Տղաքս՝ դեռ նոր վերադառնան գեղեցիկ առողջնցէք մը, որ սարքեցին Mr. Armstrong Smith ի պատուին։ Հիմա բոլորն ալ շրջանակ կազմած կը պարեն խաչոր խարույկի մը շուրջ, որ կը վառենք ամեն շաբաթ իրիկուն մեր հեռաւոր սկաուտ եղբայրներուն յիշատակին։ Շատ երջանիկ կ'ուզենք է։

Ցաջողութենէ յաջողութիւն կ'անցնինք։ Ամէն ձեռնարկ արդէն կանխաւ յաջողութիւն է, ոչինչ չ'են մերժեր մեզ։ Երազի մէջ կ'ապրիմ կարծես։ ո՞ւր մնացին Պոլիսի մրայլ օրերս։ Nul n'est prophète...

Ցաջողութիւն կը մաղթեմ նաեւ «Մեր Տան Երգերուն» հրատարակութեան։ Ինձի քանի մը օրինակ. բաւական չատ, զրկելու ըլլաս աղէկ կ'ըլլայ։ Որբերուն արտասանել կու տամ ոտանաւորներդ։ Այդ տեսարաններէն երեք հատ իմ քովս են (brouillonները), և հրաչքով ազատեցան ծովէն և Կարսի կողոպուտէն։

Այսքանով կը փակեմ, որովհետեւ քունս եկաւ։ Այսօր չատ յոգնեցայ։ Տղոցս հոգին բերանը բերի տղանցքով, մարզանքներով եւն։

Կենդանիներս չատ լաւ են։ Ահագին կը բազմապատկուին կոր։ «Արին» լաւ է, արապ ին և պէյ ին բարեւ կ'ընէ։ Տնտղները կը հիանան։ Պրն. Նազարէթեանը եթէ գայ կը պատմէ։

Իմ պաչտելի տղոցս հետ չատ երջանիկ կաղանդ մը անցուցի։ Ամէն զոհողութիւն ըրի, և յաջողեցայ արքայավայել կաղանդ մը վայելել տալ իմ 175 հրեչտակային և խոստմնալից որբերուս։ Ոգեւորութիւնը իր գագաթնակէտին էր հասած։ Անոնց սէրը դէպի ինձ յուզիչ կերպով կը յորդէր։ Ժամը գիշերուան 12 ին մէկ մնացած, սկաւտական նուագախումբը «Մեր հայրենիքը» զարնել սկսաւ, և բարեւի կեցած, սրտատրոփ, յուզմունքէն եղեքտրականացած մուտք գործեցինք նոր տարին։ Տպաւորիչ վայրկեան էր։ Բոլոր տղաքը զգացին ինչ որ ես կ'զգայի, ինչ որ կ'ուզէի որ զգան։ Արդէն բոլորն ալ իմ շունչս կը քաշեն ու կու տան, Ցոյցեր կատարեցինք Ամերիկայիներուն ի պատիւ, Հայաստանի մէջ առաջին անգամ ըլլալով իրենց ազգային երգը նուագելով։ Իսկ հետեւեալ օրը թատերական երեկոյթ մը տուինք, ներկայացուցնելով «Պաղտասար ադրար», կենդանի պատկերներ, եւլն։ Վերջապէս, Հայաստանի ամէնէն հրիտասարդ, կենսունակ. գեղեցիկ ոյժերը իմ տրամադրութեանս տակ են այստեղ, Կաղաջի Բօստի սկաւտատան մէջ, որուն համբաւը մեծ է և դեռ պիտի մեծնայ, եթէ նախախնամութիւնը հայթայթէ առիթներ։ Երեւանի մէջ ալ սկաւտական շարժումը, որուն գլուխն է Օննիկ Եազմաճեանը, հսկայաքայլ կը յառաջդիմէ, հակառակ ամէն դժուարութեան։ Մանաւանդ որ իր անզուսպ եռանդը և ջերմ վերաբերմունքը այնտեղ փոխադրած է Մր. Պրաունը, մեր նախորդ լիաշօրը։

Մեր որբանոցը ֆիզիքական զարգացման թեռեւս աննախընթաց դպրոց մըն է, և անհաւատալի ու վաւերական արդիւնքներ ձեռք բերի։

Այն տղաքը որ բերանիս բաց կը դիտէին իմ ֆիզիքական չափերուս և փորձերուս, հիմա անցած են զիս, և անոնց փորձերը կատարելէ այնքան հեռու եմ, որքան անոնք էին ինձմէ։

Այս ձմեռ մանաւանդ, զարմանք սփռեցին իրենց չարքաշութեամբ, բաց ծունկերով, ձիւնի լոգանքներով։ Մեր տակաւ կողմը սկաուտական գիտելիքներն են, բայց դարնան այդ թերին ալ մասամբ կը դարմանեմ։

ՍԻՐԵԼԻ ԵՒ ԿԱՐՕՏԵԱԼ ՍԻՄՕՆՍ

Երկար և անչքմեղանալի լռութենէ մը վերջ կը գրեմ քեզ։— Նամակդ ստացած եմ ժամանակին։

Գործէս քաղած բարոյական զոհունակութիւններս աննշմար կ'անցնէին մարմնիս մաշուիլը, և դուրսի գրոհները վրդ կուգան։ Գործս գրաւած է բոլոր եռանդս, ժամանակս, ուշադրութիւնս։ Ոգի ի բուին կ'աշխատիմ, օր մը լաւ կը քաղեմ, օր մը վատ։ Պահակապետի մշտական հսկումէս ու պատասխանատուութենէս զատ, պէտք է հսկեմ իմ 180 փառաւոր պատանիներուս բարոյական կամ ֆիզիքական ամէն մի շեղումին, մարմնին ամէն մէկ մկանին, նկարագրին ամէն մէկ գծին վրայ։ Իմ մանրակրկիտ ընաւորութիւնս թոյլ չի տար ինձ ըսելու թէ ամէն ինչ կատարեալ է, բայց արդիւնքը գնահատելի է։ Վերջին ծայր առողջ ու տաքարիւն, բաւական կարգապահ, և մանաւանդ խիզախ ոգիով տղաք ունիմ, որոնք ո՞վ գիտէ ուր չպիտի գային եռեւէս։

Միջավայրս նեղ, բայց վերջին ծայր ջերմ է։ Առաւել կամ նուազ վերապահ, բայց և այնպէս անկեղծ համակրութիւններով շրջապատուած եմ։ Օդը, բնութիւնը, ամէն ինչ միօրինակ է։ Կաղաջի-Բօստի սահմաններէն դուրս չ'ենք գար։ Ո՞ւր են Պոլսոյ զանազանութիւնները, ընկերութեան, ժամանցի, արշաւանքի։

Հիմնարկութիւնս ստեղ մըն է Հայաստանի մէջ։ Կաղաջի-Բօստին մէջ, որ փոքրիկ կատարեալ քաղաք մըն է, եղական դիրք ունինք

մենք։ Այս փոքր անկախ ովասիսին բանակը, գեղարուեստական և սրբազան ուժը մենք ենք։ «Սկառ՞ւտ»... այս բառին տուած ենք առասպելական հմայք մը, ինչպէս ժամանակ մը Տորքը։

Մեր թատրոնը անուն կը թողնէ, նուագախումբը ամէն հաւաքոյթի զարդն է։ Խրոխտ տղանցքնիս մեծ օրերը կը ծանէ։ Վերջապէս, Սիմ Ջան, լաւ ենք։ Պէտք էր դուն ալ հոս լինէիր։ Գործ կը լինի քեզի։ Նիւթական գոհացում քիչ. բայց բարոյական շատ։

Հիմայ շատ գբաղած եմ ամառուան ծրագիրը գծելով, աղոցը թեթեւ հագուստները պատրաստելով, ևլն։ Աշխատանքին վերջը չի գար բայց այնպէս քաղցր է որ չ'եմ յոգնիր։

Ագարակ ալ ունինք։ Սի՛մ, գիտե՞ս, խոզեր ալ ունինք մեր ագարակին մէջ. և ոչինչով կ'ապրին. մեծ արդիւնքներ տալով։ Բայց իմ իսկական ագարակս տղաքն են։ Տեսնաս ինչ ֆիզիքականներ ձուլեցի։ Ուր էր թէ իմինիս կողքին ձեռնահաս մէկն ալ ունենար աղջկանց ագարակ մը։

Սիրով համբոյրներս ընկերներուս, մասնաւորաբար Անդրանիկիս, որուն կը մաղթեմ նոր բանոր նուաճումներ իմ սիրական տարրիս, ծովուն վրայ, որմէ յաւէտ բաժնուած եմ, եթէ Վանայ ծովը չի տեսնամ։

Համբոյրներով
ՎԱՇԱՆ

ՍԿԱՈՒՏՆԵՐ

Անցնում են մեր չարքեր մատաղ
Շարքեր մանուկ եւ հզօր
Անցնում են միշտ կայտառ, ուրախ,
Սրտերնին վեհ, անբիծ ու անդորր:

Մեր փոքրիկ աշխարհում սրբազան,
Կոփում ենք ու կերտում մեր հոգին,
Հոգիներ յստակ, մանկական,
Հրաշագործ կերտողի մեծ ձեռքին:

Մենք ունինք երկու մեծ սկզբունք
Սկզբունք երկնային ու մաքուր
Պահում ենք այս խօսքեր մեր սրտում
Վեհ խօսքեր՝ «բարձրացիր բարձրացուր»:

Ալեքսանդրապոլ ԽՈՐԷՆ ՍՃԷՄԵԱՆ
Վանեցի

ՀԱՅ ՊԱՏԱՆՈՒՆ

Հայ պատանի, Սիրտդ մաքրիր
Վատ գործերից դու ետ քաշուիր
Ֆիզիքապէս եւ գործերով
Հոգով մարմնով անբիծ դարձիր:

Արգելքներէն ետ մի կանգնիր,
Առաջ քալէ դու համարձակ
Նուիրիր քեզ սուրբ գործերի,
Փրկելու քո անշէն երկիր:

Մանուկներին միշտ բարձրացուր
Որ մեծանուն, լաւ մարդ դառնան
Բարձրացնեն միշտ ուրիշին
Հայաստանի պարծանք ըլլան:

Ալեքսանդրապոլ
ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ
Վանեցի

Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿԻ ՊԷՏՔ Է ԶԳՏԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏԸ

Մենք գիտենք որ Հայաստանը դարերից ի վեր միշտ եղել է ճնշումների տակ, և մինչ այսօր էլ այդ լծի տակն է։

Այս վերջին տարիներում Հայաստանում ծագել էր փայլուն արեւը, բայց սեւ ամպերը շուտով եկան և արեւի ճառագայթներին խափանեցին, և մինչեւ այսօր էլ խափանում են։

Իսկ ներկայիս տեսնում ենք. որ այդ սեւ ամպերը հետզհետէ հեռանում են և նկատելի են լինում արեւի ճառագայթներ։ Այդ ճառագայթներն են հայ սկաուտի խմբերն ու խմբակները, որոնք հիմք են դրել գլխաւորապէս Կ. Պոլսում և այդտեղից տարածուել են նաեւ Անդրկովկասում և այլ տեղերում։

Ահաւասիկ սրանք են մեր հայաստանի փառքն ու պարծանքը, որոնք պէտք է բարձրանան Մասեաց սարի նման։

Ուրեմն ձիգ թափի՛ր, Հայ սկա՞ուտ, որպէսզի արժանանաս այդ փառքին ու պատուին։ Զարգացրու քո միտքն ու մարմինը, ուժեղացրու քո ջղուտ բազուկները և բարձր պահիր հայրենիքի պատիւը, որպէսզի գայ ժամանակը որ մի օր մեծ պարծանքով դուրս գաս և ծածանեցնես մեր եռագոյնը։

Անուասիկ, Հայ Ակաուտ։ Դու պէտք է հասնիս այն նպատակին, և այդ նպատակին հասնելու համար չպէտք է յուսահատիս, որովհետև շատ յուսահատեցուցիչ դէպքեր են եկել, բայց դու միշտ ելել ես անսասան, և որանից յետոյ էլ պէտք է աւելին անես։ Իսկ որպէսզի հասնիս այդ նպատակին, դա կախուած է նաև բարձրացողներից, որոնք պէտք է քեզ բարձրաձնեն Մասեաց սարի նման։

Ալեքսանդրապոլ
կազաֆի Բous

ՄԿՐՏԻՉ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՔԷԲԹԸՆ Մ. Տ. ՊՐԱՈՒՆԻՆ ԿԱԶԱՖԻ ՊՕՍՏԻ ՆԱԽՈՐԴ ԼԻԱԶՕՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԻՐ ՄԵՆՈՒՄԻՆ ՍՈՒԹԻՒ ԽՕՍՈՒԱԾ

ՍԻՐԵԼԻ ՄԸՍԴԸՐ ՊՐԱՈՒՆ,

Անկարելի է բաւերու թոյլ օգնութեամբ թարգմանել այն զեղուն զգացումները որոնցմով փոթորկած ենք ամէնքս։ Սակայն ստիպուած ենք առ այժմ այդ ձեւով արտայայտել այն անկեղծ համակրանքը, խոր հիացումը և անհուն երախտիքը զոր կը տածենք ձեզ հանդէպ։

Մենք, բազմաչարչար և մարտիրոս ազգին մատղաշ շառաւիղներս, վայելելով ազատ Ամերիկայի հոգատարութիւնն ու պաշտպանութիւնը շատ լաւ ենք ըմբռնած այդ անչափելի աջակցութեան բովանդակ վեհութիւնը՝ և անձնուիրութիւնը այն ազնիւ օտարազգիներուն որոնք եկած են այստեղ մեզ համար։

Դուք, մեր սիրեցեալ Մըսդըր Պրաուն, այդ ազատամիտ և այլասէր ժողովուրդին փայլուն ներկայացուցիչը եղաք, և մ'որ ծուարուած ազգութեան վերջին և անյոյս խլեակները, շնորհիւ ձեր ցուցադրած ասպետական և անաչառ պաշտպանութեան, ֆիզիքապէս փրկուեցան և անվթար պահեցին ապրելու կամքը, որ մեր ժողովուրդին անսպառ դրամագլուխն է։

Մեր սկաուտ-պահականոցը մասնաւորապէս ձեր բարի ուշադրութեան առարկան լինելով, կարճ ժամանակի մէջ բարենորոգուեցաւ ամէն տեսակէտով, և թոյլ բարոյականով ու հիւծուած մարմիններով տղերքը, շնորհիւ ձեր հզօր քաջալերութեան և աջակցութեանց, արժանացան սկաուտ անունը կրելու պատուին, և այդ նախանձելի տիտղոսը տանելու փառքով և գիտակցութեամբ։

Եւ այժմ ձեզմէ բաժնուիլը՝ մի այնքան տխուր յայտնութիւն է, որուն հետ դժուար եղաւ մեզ համար հաշտութեան եզր մը գտնել։ Ճնշող իրականութիւնը մեզ համար տանելի կը դառնայ միայն այն նկատումով, որ ձեր մեկնումին մէջ կը գտնենք արժանի բարձրացում և վարձատրութիւն, ի գնահատանք այն բազմապիսի առաքինութիւններուն զոր ապատաբերեցիք մինչեւ ցարդ ձեր պաշտօնավարութեան միջոցին։

Ուր որ ալ երթաք, ինչ որ ալ ըլլայ, մեր սիրող սրտերն ու քնքուշ յիշատակները ձեզ հետ պիտի լինին։ Փափուկ անկիւն մը պիտի ունենանք մեր իւրաքանչիւրին քաղցրագոյն յիշատակներուն մէջ։ Ձեր ամէն գործին, ամէն ձեռնարկին մէջ, ձեզ զօրավիգ պիտի գտնէք ձեր սիրած սպիտակալպեստ և թիւսմորթ հայորդիներուն սրտագին ցանկութիւնները, երախտագէտ և քաջալեր ժպիտը, գերազանց յարգանքի խոսքեր բարեւը որ իրենց թանկագին և անդուգական բարերարը եղաւ։

Մեր պահականոցին մէջ պատուոյ տեղ ունի մի գեղազարդուած արձանագրութիւն։ Այդ՝ մեր սկաուտական երդումն է, որ երեք յօդուածով կ'ուրուագծէ այն գալար շաւիղը որուն պիտի հետեւի պատանին, հասնելու համար բարի մարդ և տիպար քաղաքացի դառնալու իտէալին։ Ամէնազգի միլիոնաւոր տղաներ այդ երդման վրայ կը հիմնադրեն իրենց կեանքի ուղղութիւնը։

Մեր սրտերուն մէջ մենք որոշեցինք չորրորդ յօդուած մ'ալ աւելցնել այդ վսեմ ուխտի վրայ։

«Կե՛ր դուք մեր սրտերուն մէջ անջինջ պահել ձեր յիշատակը, երախտապարտ լինել ձեր բարիքներուն համար, արդարացնել այն յոյսերը որ դրած էք մեր վրայ, և օգնել ձեզ մեր կամքին ու բազուկներուն բոլոր ուժովն ու թափովը, մեր անկեալ հայրենիքը իր պատուանդանին վրայ բարձրացնելու համար։

Ձեր անունը մ'ոգ մնա պիտի մնայ նաեւ մի ուրիշ որոշման կապով։ Հանդիսաւոր և միահամուռ ձայնակցութեամբ, ցանկացանք որ բարեհաճիք ընդունիլ «Կազաֆի Բոստի պատուակալ սկաուտապետի» տիտղոսը։ Ընդունելով ձեզ իբր մեր պետը, չի նայած մեզ անջատող հեռաւորութիւններուն, մենք հանգոյց մը եւս աւելցուցած կը լինենք այն անխորտակելի շղթային, որը մեզ պիտի կապէ ձեր յիշատակին և մեր յանձն առած պարտականութիւններուն։

Near East Relief

151, Fifth Avenue

New-York

November 14. th, 1921

The Boy Scouts of Alexandropol, Armenia

My dear Comrades,

I wonder if you have seen the pictures that were taken of you while we were in Alexandropol. I enclose a few prints herewith, in which you may be interested, and I need not assure you that we remember most pleasantly our brief visit with you last summer, and are determined to do everything within our power to help you to become useful citizens and leaders in the new era that must and will come to your country.

Sincerely yours
(Sgd) C. V. VICKREY
General Secretary

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

Նիւ-Եորք 1921 Նոյմբ. 14

Հայ Պոյ-Սկաուտներ Ալեքսանդրապոլի
Հայաստան

ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐՆԵՐ

Ձեզ գիտեր թէ տեսա՞ք այն պատկերները որոնք շուսանկարեցին մեր Ալեքսանդրապոլ եղած ատենը, ներփակ կ'ուղարկեմ մի քանի հատ որոնցմով կարծեմ պիտի հետաքրքրուիք:

Ձեզ կը վստահեցնեմ որ, մենք մեծ հաճոյքով կը յիշենք մեր անցեալ ամառուան կարճ այցելութիւնը Ձեր մօտ եւ որոշած ենք կարելին ընել, մեր կարողութեան սահմանին մէջ, Ձեզ օգնելու՝ որպէսզի դիտոք օգտակար քաղաքացիներ ու առաջնորդներ այն նոր սահմաններուն մէջ՝ որոնք պիտի ունենայ Ձեր Հայրենիքին:

Ձերդ անկեղծօրէն
Զ. Վ. ՎԻՔՐԻ
Ընդհանուր Քարտուղար

Որովհետեւ դուք սկաուտ էք, գերազանցօրէն։ Սկաուտ էք, որովհետեւ բարձր պահելէ զատ ձեր մեծ հայրենիքին պատիւը, սիրեցիք նաեւ մերը։ Սկաուտ էք, որովհետեւ խոստացաք օգնել անկարին, զայն չի լքել վտանգի պահուն, և ձեր խօսքը նուիրական եղաւ։ Սկաուտ էք, որովհետեւ ձեր պարտականութիւնը կատարեցիք ամէն հանգամանքներու ներքեւ։ Սկաուտ էք, որովհետեւ շատ բարիքներ գործեցիք, որոնց հաշիւը չկայ։ Սկաուտ էք, որովհետեւ մաքուր եղաք խօսքով ու գործով։ Սկաուտ էք որովհետեւ զուարթ էիք միշտ, քանի որ ձեր խիղճը մաքուր էր, և պարտականութիւնը կատարած մարդու երջանիկ և չէնչող ցոլքը կը ճառագայթէր ձեր դէմքէն։ Սկաուտ էք, որովհետեւ միշտ համեստ ու քաղաքավարի եղաք ձեր բարձրութեան մէջ։ Սկաուտ էք, որովհետեւ չինարար, հետեւողական, ստեղծագործ և յառաջդիմող եղաք։ Սկաուտ էք, որովհետեւ օգնեցիք գիժբաղդին, տկարին, անկիրթին, մերկին, սովածին, հիւանդին։ Սկաուտ էք, որովհետեւ քաջ, անսասան և պաղարիւն եղաք մեծ վտանգներու ժամանակ։ Սկաուտ էք, որովհետեւ բարձրացուցիք մեզ ամենքս, ու բարձրացաք։

Եւ հիմա, երթաք բարով ու բարի ճանապարհ։ Այնտեղ դուք մեզ չէք կարող մոռնալ, որովհետեւ ձեր աչքին առաջ ցցուած պիտի տեսնէք միշտ մեր վսեմ խորհրդանիշին իրական պատկերը, ալեհեր ու հոյակապ Արարատը իր բոլոր պատմական, բարոյական, ֆիզիքական մեծ նշանակութիւններով։ Մենք բոլորս, ձեր սիրական հայ սկաուտները, լցուած բարեխուն, ալեկոծուած սրտերով, ձեզ կը ցանկանք առողջութիւն և երկար կեանք, լիակատար յաջողութիւն ձեր բոլոր բարի ձեռնարկներուն մէջ, և այն գերագոյն ու տեւական երջանկութիւնը որ մենաչնորհն է այն մարդուն, որ անշեղ կերպով կատարած է իր պարտականութիւնը և որ այնքան երախտաւորեալներ ունի։

Ալեքսանդրօրոյ, Կապաջի Բուս, 15 Օգոս. 1921

Կապաջի Բուսի Սկաուտներու կողմէ

Խմբապետներ	*Պահակապետներ*
ԳԱՍՊԱՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ	ՎԱՀԱՆ ՁԷՐԱՁ
	Օգնական՝
ԼԵՒՈՆ ԱՒԵՏԻՍԵԱՆ	ԺՕՐԺԻ Մ. ՄԱՐՏԻԿԵԱՆ
	Ուսուցիչ
ՍԱՐԳԻՍ ԱՒԵՏԻՍԵԱՆ	ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ
ՍԱՄՍՈՆ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ	
ՍՄԲԱՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ	

Սկաուտական Թղթակցութիւններու Խումբին
ՄԿՐՏԻՉ ԹՈՐՈՍԵԱՆ
Արհեստաւորաց Խմբապետ
ՄԻՀՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Charles V. Vickrey
General Secretary
ՄՐ. Չ. Վ. ՎԻՔՐԻ
Ընդ. Քարտուղար

NearEastRelief

ԱՄԵՐԿՆ. ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

Ամերիկեան նպաստամատոյցի այն յարգելի դեմքերը որոնք ազնուօրէն եւ եռանդուն կերպով փարած են Հայաստանի տառապանքի թեթեւացումին:



Dr. F. W. Maccallum
Director Caucasus Branch
ՏՕՔԹ. Ֆ. ՈՒ. ՄԷՔԱԼԸՄ
Ընդհ. Տնօրէն Կովկասի Ճիւղին

Capitain M. D. Brown
Represantative of Armenia
ՄՐ. Մ. Տ. ՊՐԱՈՒՆ
Հայաստանի Ներկայացուցիչ

ՉԵՋ

ՄԻՇՏ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ

ՀԱՅԱՍՐԱՆԻ ՄԱԱՌԻՏՆԵՐ

Captain E. A. Yarrow
Director-General
Caucasus Branch-Tiflis
ՄՐ. ԵԱՐՕ
Կովկասի Ընդհ. Տնօրէն Թիֆլիսի



ՍԿԱՌԻՏԻ ԵՐԳԸ

Օրը մթնում է, թնդում են աւիռուն
Սրտերը մեր ժիր խնդութեամբ ջահիլ.
Սուրբ է հագել մեր պահակասուն,
Ու մենք չենք կարող մեր հիշը պահել:

Անցնում ենք շարքով առաջ ու առաջ,
Մեր ոտների տակ գետինն է թնդում,
Մեզ հրդեհել է նոր կեանքի մի կանչ
Ու մենք հզօր ենք աշխարհիկ բանտում...

Շարքեր նոյնազօր, շարքեր բիւրաբիւր
Փռուել ենք որպէս վարդավառ մի տօն,
Կազաչի-Բոսֆից մինչեւ ջինջ Վոսֆոր.
Մինչեւ արեւմուտք, հեռաւոր Բոսոն...

Անկումներից վեր, վերելքից վերե՛լ,
— Եկէ՛ք, կանչում ենք ուշացածներին,
Եկէք շարք առ շարք մեր աշխարհով մեկ,
Հները անցան, նոր բախտ չբերին...

— Եկէ՛ք, կանչում ենք, թող մեր կանչը սեղ
Ձեր հոգիներում հուրի պէս այրի,
Մեր յաղթական եկեղ ու հասէ,
Եկէք միացէք մեր հոծ շարքերի...

Երկիրը մեր հին, մորթուած բիւր անգամ,
Կանչում է արթուն, կանչում ու կրկին
Մեր խումբերն են անցնում յաղթական,
Հիւսում նոր պսակ, նոր կեանքի փառքին:

Հայաստան Գ. ՄԱՇԱՐԻ

ՍԿԱՌԻՏ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Ուժեղացի՛ր, ո՛վ սկաուտ,
Ուժեղացուր քո խեղճ ազգին,
Նայիր շուրջդ՝ աչքովդ տես,
Ի՞նչ ես տեսնում, արիւն, դիակ...

Տե՛ս, իմացի՛ր, ի՞նչ է քաշել
Խեղճուկ ազգդ այսքան տարի,
Այդ ցաւերով դու բորբոքուած
Քու շարքերդ սեղմիր ուժգին:

Մեր աւերակ Հայաստանը
Կանչում է քեզ, ո՛վ հայ տղայ,
Նա կարօտ է մատաղ բազկիդ,
Ու քեզ նման շատ շատերին:

Մասիսի պէս դու միշտ հպարտ
Պատրաստ եղիր հլու հանդարտ
Եւագոյնդ բարձր պահիր
Թող ծածանի լեզու առած:

Հայաստան ԽԱՉԻԿ ՀԱՅԿԱՉԵԱՆ
(Վան, հայոց ձորէ.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՓԷՐՏԸՆ ԵԱՐՕՅԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԻ ԿՈՎԿԱՍԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Սոյն յայտարարութիւնները քաղած ենք, այն բանախօսութենէն որ խօսած է Մր. Եարօն Ի Մայիս 1922ին Ռեթայի Ադդ. Մատենագարանի սրահին մէջ, Պատրիարքարանի կողմէ իրեն ի պատիւ տրուած թեյասեղանին առթիւ։

Հոս կուզենք հաճոյքով յիշել որ Մր. Եարօ, մասնաւորապէս մեր սրտին մօտիկ է այն պատճառաւ որ մեր դիմումին վրայ անցած տարի սիրով ստանձնեց Թիֆլիսի Հայ սկաուտներու պատուակալ նախագահութիւնը Ս. Խ.

...Կ'աշխատինք մեր բոլոր միջոցներով, մեր գործը Հայերուն հետ է, մենք անոնց գործակատարներն ենք։

Երեւանի մէջ ունինք 4000 որդի, Էջմիածնի մէջ՝ 600-1000։ Ալիքսանդրապոլի շրջանները ունինք որբանոցներու երեք մեծ կեդրոններ, 25) շէնքերով և ընդամէնը 14,000 որբերով։ Ասկէ զատ քաղաքին մէջ այլ ունինք 2000 որբեր։ Ջալալօղլուի մէջ՝ 4000, Գարաքիլիսէի մէջ՝ 2000։ Մեր խնամած որբերուն ընդհանուր թիւը կը հասնի 23,000ի։ Թիֆլիսի մէջ ալ կը կերակրենք 10,000 հայ կիներ և երախաներ։

Ակիզի օրերուն, երբ երախաները կը հաւաքէին մեր որբանոցներուն մէջ, չափազանց մեծ դժուարութեանց կը հանդիպէինք։ Երախաները, գրեթէ ամէնքն ալ, տիրող պայմաններուն հետեւանքով խաթարուած էին։ Դժուար բան մը էր, գողութեան և սատիսօսութեան վարժուած երախաներու նկարագիրը չինել։ Այս տեսակէտով, Պոյ-սկաուտիզմը նախախնամական դեր մը կատարել։ Մեր որբանոցներուն մէջ ունեցանք Պոլսէն եկած երեք մարզիչ երիտասարդներ,— Պ. Պ. Զերաղ, Եաղմաճեան և Բաջունի — որոնց կը պարտինք մեր երախաներուն՝ այսօր դէպի լաւը ենթարկուած փոփոխութիւնը։ Աւանդնապէս չեչաւ, կ'ըսեմ.

— Մենք պէտք ունինք ուրիշ մարզիչներու ալ. թող գան եւ ծառայեն իրենց փոքրիկ եղբայրներուն։ Չեմ կրնար երեւակայել ուրիշ աւելի մեծ հայրենասիրական ծառայութիւն մը քան այն, որուն համար կոչում կ'ընեմ հայ երիտասարդներուն։ *Առ այժմ մեր որբանոցներուն մէջ ունինք 1000ի մօտ սկաուտներ։*

Թիֆլիսի աղջիկ սկաուտները Հայաստանի մէջ



Ալեքսանդրապոլի Խազոյի Բոյսկի Սկաուտները
The Boy Scouts of Armenia

Վ. ՉԵՐԱԶ



Այնք ս.Մրլ ապօլի Կաչաջի Բոսոի սկաուտներր Աբլէքիմ խաղերու մէջ իրենց խմբապետ Վ. Չերազի հետ:

The Boy Scouts of Armenian



Սկաուտներ կռվէ գանուած
կնճռուած նարածին մը



Հայաստանի բոյսի, Ռոլէիսցի եւ Դարաբիլիսայի (Ալեքսանդրապոլ) սկաուտներ։
The Boy Scouts of Armenia

ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԱՈՒՏ ՊԷՏ
ՋՕՐ. ՊԷՏԸՆ-ԲԱՈՒԷԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ARMENIAN BOY SCOUTS

I HAVE just heard from the Boy Scouts in Armenia, at a place called Kazatchi-Post, near to Alexandropol. There are six troops of them, each about forty strong. Little more than a year ago these boys were wild, dirty, half-starved urchins. To-day they are described as fine, clean, upstanding young fellows taking their turn of duty in guarding their post.

They are very keen on boxing and football, both strictly according to British rules. Each boy keeps a book which records all about him, his name, age, parents, date of Scout promotions and awards. There is a «Golden Page,» showing any specially good action done by him, and also a «Black Page,» on which any bad action would be recorded.

There is a list of all equipment that has been issued to him. The Scout keeps a diary in the book in which he puts down any Scout ideas that he has learnt or Good Turns carried out each day and so on.

The motto of the Armenian Scouts is «Rise and Raise.» It means "Improve yourself and help others to rise.„

Not a bad motto for any Scout to follow.

Their worst Scout punishment is to deprive the Scout of his right to carry his staff for a certain number of days.

That shows to me that those Armenian boys have got the true Scout spirit since they take a real pride in their Scout staves.

Robert Baden-Powell

«The Scout» No 744 Chief Scout

ՀԱՅ ՊՕՅ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ

Վերջերս լուր առի Հայաստանի սկաուտներէն Ալէքսանդրոպոլի մէջ Կազաչի Բոստ ըսուած վայրէն. 6 խումբեր կան, ամէն մէկ խումբ 40 հոգիէ բաղկացած:

Դրեթէ տարի մը առաջ այս տղաքը, վայրենի, աղտոտ, արարածներ էին. այսօր կ'ըսեն թէ ազնիւ, մաքուր ու բարեձեւ երիտասարդ տղաներ եղած են եւ արձանագոր կերպով պահպանութիւնը կ'ընեն իրենց զսնուած միջավայրին:

Պոքսի եւ Ֆուտպոլի մեծ փափաք ունին եւ այս երկու խաղերն ալ անգլիական օրէնքներով կը խաղան. ամէն տղայ ունի անձնական տետրակ մը ուր գրուած է իր եւ ծնողին անունը, տարիքը, սկաուտական աստիճաններու եւ վարձատրութեանց բուականը, մասնաւոր երկու էջեր կան մին ոսկի էջ ուր կ'արձանագրուին տղուն մասնաւորաբար գործած ազնիւ արարքը. եւ սեւ էջ մը, ուր պիտի արձանագրուի գործուած անպատուաբեր արարքը:

Ցանկ մը կայ ուր արձանագրուած է իրենց տրուած բոլոր գոյքերը: Սկաուտները կը պահեն մասնաւոր արձանագրութեան տետր մը նշանակելով իրենց առօրեայ բոլոր գործունէութիւնը:

Հայ սկաուտներու նշանաբանն է «*Բարձրացիր Բարձրացուր*» որ կը նշանակէ *ինքզինքդ կատարելագործէ եւ ուրիշները. նշմարտիւ նեսեւելիք լաւ նշանաբան մը որ եւ է երկրի սկաուտի համար:*

Անոնց համար ամենախիստ պատիժն է սկաուտական գաւազանին զրկուիլ զրկուելու արգիլումը որոշ բուականի մը համար:

Ես կը տեսնեմ թէ հայ սկաուտները. սկաուտական ոգի ունին. որքան ատեն որ նշմարիս հպարտութեամբ մը կը կրեն իրենց, սկաուտական գաւազանները:

ՊԷՏԸՆ ԲԱՈՒԷԼ

Ընդհ. Սկաուտ պետ

ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՄԷՋ

Ամերիկեան նպաստամատոյցի տեղեկագրէն քաղուած

Մեծ գնահատումը արժանի են սկաուտ վարիչները, որոնք մարզած են Ալեքսանդրապոլի որբ սկաուտներու հիանալի խումբը: Այս պատանիները կարելի է բազդատել ամերիկեան լաւագոյն սկաուտներու խումբին հետ: Լաւ գործի մը լծուած են, և իրաքանչիւր որբի փափաքն է միանալ սկաուտներու խումբի մը:

Կը կարծեմ թէ, Ամերիկա, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի միջոցով, ոչ միայն երախաները ապատած է սովի ճիրաններէն, այլ և իր շինարարական աշխատանքով, նոր կաղապարներով կ'օծէ երկրին ապագայ քաղաքացիները:

ԻՆՉ ԷՐ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ԱՌԱՋ ԵՒ ԻՆՉ Է ԱՅԺՄ

Մեր նախկին կեանքի ապրելակերպի բոլոր պայմանները դառն էր, իսկ դաստիարակութիւնը բոլորովին աչքաթող եղած, որովհետև չկար կազմակերպչական ոգի ունեցող անձ մը, չկար մարդ մը, որ գործին նուիրուած լինէր և ունենար դաստիարակչական ընդունակութիւն, այնպէս որ թէ ֆիզիքականը և թէ բարոյական զարգացումը դանում էր բաւականին ցած աստիճանի վրայ։

Մեր մէջ տիրում էր մի խաւնիճաղանճ դրութիւն որտեղ տիրում էր, ստոր, խարեբայութիւն, ինքնասիրութիւնը, կեղտաութիւն և այլն։

Բայց բախտը մեզ ժպտաց և ազատ՝ լու ցանկութիւնն մը ունեցաւ Նախկին անընդմեջ դրութիւնից

Ահա այդ ազատարարն Օննիկ Եաղմուռեանն էր, որ թողնելով իր տունն, ծնողք, դալով Հայաստան գործ մը կատարելու համար։

Ահա այս գործին նուիրուած ան կարճ ժամանակում մեծ գործ անուաւ կազմակերպելով սկաուտական խմբեր, որը համեմատած նախկին կեանքի հետ բաւականին բարձր մակարդակի վրայ կը գտնուի, որտեղ բաւականին զարգացել է ֆիզիքական և բարոյական կրթութիւնը և մենք պարծանքով կարող ենք ասել, որ կանգնած ենք յառաջդէմ հասատաուն հիմքի վրայ։

Իմ խոյնին շնորհակալութիւնս եմ յայտնում մեր բոլոր սկաուտներու կողմէ Պոլսոյ. Հ. Մ. Ը. Մ. որ հա չի մոռացել մեզ և չի մոռանայ մինչեւ վերջ, մ.ր ժողովուրդն էլ ճակատագրս կարող է ասել որ մենք էլ ունենք ապրելու սկաուտիզմին։

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Երեւան — Տարոնցի

III Խմբի Պատասխանատու Վարիչ

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՈԳԻՆ

Այն տարուց Մարտի սկիզբից երեք ուսուցչով պաշտօնավարած էինք ամերիկեան կոմիտէի որդ պահակների դպրոցում. չնայած մեր գործադրած բարոյակրթական ու դաստիարակչական բոլոր հնարաւոր միջոցներին, ինչպէս նաեւ պահակապետի ամենախիստ պատիմներին, մեզ յաջողուեց երկու ամսուայ ընթացքում լուրջ հիմքերի վրայ դնել դպրոցական պարապմունքները եւ որ եւ է կերպ բարձրացնել տղաների բարոյականը։ Թիւրքերի վերջին ներխուժման ժամանակ խուճապային փախուստի մատնուած եւ սարսափներ տեսած այս տղաները բոլորովին գունատացել եւ սանձարձակ էին, իրենց վրայ դրուած պարտականութիւնները անարգիսղծորէն էին կատարում եւ ընդհանրապէս ինկած էին պատանեկական մտքի ներից. դպրոցում էլ կատարում էին դպրոցական կարգին, կարդում գրենական դիտոյքները. դասարաններում թիթեղեայ վառարանների վրայ ցորեն խարկում, ուտում փնացած աղած ձուկ եւ ապրանում դասարանի օդը, կուում եւ հայհոյում իրար, օրը ցերեկով գրասեղանի վրայ երկարում եւ խումբ-խումբ եւ այլ նման տգեղ ու անվայել արարքներով պարապում։ Մեծ դժուարութեամբ էր յաջողում մեզ կարգադրել դասարանները եւ սկսել դասերը. տարբր կանոնաւոր չէին յաճախում դասերին. շաբաթուակ բացակայում կամ ուշանում էին։

Այս դառն կրթականութեան պատճառները ոչ թէ միայն ժամանակի պայմաններն ու գործի անկազմակերպութեան էին, այլ նաեւ միաբողմանի կրթութիւնը։ Մենք հաւատարապէս չէինք զարգացնում տղաների մարմինն ու միտքը ինչպէս պէտք է, այլ միայն չոր ու ցամաք աւարիայական կրթութիւն էինք տալիս եւ տնտեսական փաստերի պակասով ծանրաբեռնում նրանց յոգնած ուղեղները. պահակապետն էլ պահակների հետ շատ քիչ էր լինում եւ նրանց համար որ եւ է խաղ կամ զբաղմունք չէր կազմակերպում. տղաները անգործ եւ առանց հսկողութեան մնալով փնտանում էին. չէ՞ որ անգործութիւն է մայր չարեաց։ Այս անմխիթարութիւնը շարունակեց միչեւ ներկայ պահակապետ գործի անցնելը. որը տղաներին սկաուտական դրոշի տակ մտցրեց եւ կարճ ժամանակուայ ընթացքում սկաուտական ուժեղ կազմակերպութիւն առաջ բերեց։ Խոսքին՝ ամէն տեղ փոխարինեց կենդանի գործ եւ գիտակցական խիստ կարգապահութիւն։

Եւանդուն պահակապետը որը պահակներից կազմեց մի սկաուտական խումբ իր եւ օգնականի գլխաւորութեամբ. խումբը բաժանեց ջոկատների, խումբի համար պատրաստել տուց հանգստեան, գաւազաններ, սկաուտական նշանաթներ. գոշակներ. ձեռք բերեց փող, թմբուկ եւայլն. պատրաստեց ֆուտպոլի կանոնաւոր դաշտ, երկայնութիւն. բարձրութիւն եւ արգելքներ ցատկելու եւ կռիւմարտի տեղեր ամենայն յարմարութիւններով, շինեց կանոնաւոր տուշ, բացեց առանձին սկաուտական գրատուն, գրադարան-ընթերցարան, տղաների ձեռքով մշակեց մի-երկու արտի ծաղկոցներ բանջարանոց եւայլն։ Տղաները հիմա ուրախ մեղուներ են դառել, իրենց անմիջական գործակա-

նութիւնները ամենայն բարեխղճութեամբ կատարեց ուց յետոյ, պարապ չէին մնում, այլ ամբողջ օրը զբաղում էին գպրոցում, գրադարան-ընթերցարանում, բանջարանոցներում, մարզավայրում: Դպրոցում օրը ընդմէջ պարապում են երկուբական ժամ. այնտեղ նրանք սովորում են գործնական եւ կարեւոր սկաուտական գիտելիքներ եւ լսում խրատական ու բարոյականութեան պատմուածքներ: Գրադարան-ընթերցարանում նրանք թերթում են անգլիական եւ ֆրանսական պատկերազարդ սկաուտական շրջեզ պարբերաթերթեր, դիտում պատերին փակցրած սկաուտական կեանքից գեղեցիկ տեսարաններ, պարապում հայերէն գրքերի ընթերցանութեամբ: Բանջարաբուծութեամբ պարապողները թէ ընդհանուր եւ թէ՝ իրենց մասնաւոր փոքրիկ բանջարանոցներում մարգերը մարրում են կեղտոտ խոտերից, փափկացնում հողը եւ ջրում. ոմանք թռչունների համար բներ են շինում եւ թռչնաբուծութեամբ պարապում. ոմանք էլ վանդակներ են շինում եւ նր նց մէջ պահում իրենց որսած ճագարներն ու նապաստակները: Մարզավայր-դաշտում ջոկատները գիտութեական եւ շուտեական մարզանքներ են անում, ծանրութիւններ վերցնում, գործիքներով մարզանք անում, դրօշակախաղութեամբ պարապում, տուշով խաղանում, ներկայացման փորձերով պարապում. պատերին փակցնելու համար սկաուտական կեանքից զանազան տեսարաններ արտանկարում, երբեմն դասախօսութիւններ լսում. երբեմն էլ խմբային պէյսպոլ կամ տեղական զանազան խաղեր կազմակերպում եւ ունենում: 2-3 ամսուայ մէջ սկաուտական ոգին մեծ յեղաշրջում առաջ բերեց տղաների մէջ. այլ տանջոյ ընկերները-ուսուցչի որդիները, բարեպաշտ բարեկամներ են կարգապահ, պարտաճանաչ, բարարարար, լաւ, աշխատասէր եւ յարատեւ. մարդանքը. խաղ, լրագրը, պատմութիւններ եւ ընդհանրապէս սկաուտութիւնը շատ են հետաքրքրում տղաներին. նրանք բարոյական պարապ չեն մնում. այլ զարգացնում են հաւատարիմ մարմինը հոգին եւ միտքը. նրանք անգիր չեն արել սկաուտի գաւառները եւ այլ գիտելիքները, այլ հասկացել եւ իւրացրել են. աշխատում են իրենց առօրեայ կեանքում կիրառել սկաուտի գաւառների բոլոր կէտերը. անկարգներին եւ անհնազանդներին ընկերները միջամտում են իրենց պարտականութիւնները եւ երեսով տալ իրենց պակասներն ու անվայել արարքներս:

Տղաների մէջ կատարուած այս մեծ յեղաշրջումը մենք պարտական ենք ոչ թէ պատանեկան փարչակոն եւ մանկավարժական ընդունակութիւններին եւ բարեխիղճ գործունէութեանը, այլ զիտաւորապէս սկաուտական ամենակարող ոգուն. նրա բազմակողմանի եւ գործնական դաստիարակութեան...

Ալիքսանդրապոլ — ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Սկաուտական ուսուցիչ

ԱՀԱԻՈՐ ԵՒ ԱՆԵՐԵՒԱԿԱՅԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Boys' Life may 1922, page 48 — գրեց՝ W. B. Ashley

Սկաուտ մը ե՞րբ կրնայ հախ ձեռքովը բարեւել։

— Երբ աջ ձեռքը թշնամիի մը կողմէ կոտրուած է։

Սկաուտ մը ե՞րբ կրնայ շարքերուն մէջ ուղղ չի կենալ։

— Երբ գերութեան միջոցին ստացած վերքերու հետեւանքը կը կքի։

Սկաուտի մը ե՞րբ ներեւ ի է չի ժպտիլ։

— Երբ անխիղճ տանջանքի հետքեր քարացուցած են անոնց շրթներն ու դէմքը։

Հիմայ գանք պատմութեան։ Դժբախտ Հայաստանի տղաքը պատրաստ են սկաուտանալու։ Անոնց օգնելու մասին ինչ պիտի խորհէիք։ Եթէ տեսնէիք պատանութեան տխուր բեկորներ որ դէպի ձեզ կը քաշկռտեն ինքզինքնին, մինչ գազանային ձեռքեր զանոնք կ'արգելեն, պատանիներ որ իրենց անկերպարանացած շրթներով կը ջանան ժպտիլ և ձախ ձեռքով տալ իրենց սկաուտական բարեւը, քանի որ աջը կորսնցուցած են. ինչ պիտի ընէիք։ Ենթադրենք թէ անչարժ մնացիք մինչեւ անոնց ձեզ մօտենալով ասելը. «Սկաուտ բլլալ կ'ուզեմ. լինի՞ կ'օգնե՞ք», ինչ պիտի ընէիք։ Ենթադրենք թէ բարեկամական ամերիկեան ժպիտով մը ձեր շրթներուն—շրթներ որ երբէք չեն ճանչցած բարեբաստ մանուկի մը հպումը—պատասխանէիք. «Շատ լաւ տղա՛ք, ինչ կուզէք որ ընեմ ձեզ համար, և անոնք ըսէին. «Ձեզի համազգեստը լինի՞ տուէք». Այդ պարագային ինչ պիտի ընէիք, ենթադրելով թէ հին համազգեստ չունիք։ ըսէ տեսնեմ։

Մեր երիտասարդը, հայոց հանդէպ ցոյց տուած իր առատաձեռնութիւններով աշխարհը կը հիացնէ։ Հարիւրաւոր որբանոցներ հիմնուած են և բազմաթիւ հաղարաւոր մանուկներ կը նպաստաւորուին Ամերիկեան նուէրներով։ 60,000 թմոտ որբ տղաք կան, որոնց գլխաւոր օժանդակութիւնը Ամերիկայէն կուգայ։ Այդ տղոցմէն հաղարաւորներ հիմա սկաուտական տարիքի մէջ են և կուզեն սկաուտներ բլլալ, անոնցմէ մեծ մասը կը փափաքին բլլալ՝ մինչ ամենքը պէտք է որ բլլան։ Գիտէ՞ք արդեօք թէ այդ հայ տղաքը նոյն իսկ չեն գիտեր խաղալը։ Մէկ գնդակ լեցուած խոզի մաղով երեք հարիւր ալայ օրքան ժամանակուան մէջ գնան գետապոլ սրսիլ անով։ Թաղ երկոտասնեակ մը գնդակ գնեն։ Ինչո՞վ։ Կերած հացերնին նոյնիսկ ուրիշներէն կ'սանանն։ Հագած հագուստներնին։ Իսկ ձեզ հագցնէին պիտի նախընտրէիք ամբ մը տանը վերնատարկը պատուրաստ այդ հագուստ երբէք փոխոց չ'ունենալու

համար։ Այն մարդիկ և այն կիները որ սատանցնած են Հայաստանի որեացած մանուկները կենդանակ մարդոց և կիներու վերածելու հակայ գործը, կ'ուզեն այդ տղաքը սկաուտացընել։ Անոնցմէ շատեր սկաուտ եղած են. և բաւ սկաուտներ կ'ելլեն անոնցմէ։ Որոշ չափով մը անոնց համազգեստ ճարած են։ Այդ որբ հայ սկաուտները մեծ մասամբ Ալեքսանդրարոլ կը գտնուին։ Անոնցմէ կարելի է տեսնել թէ անռելի պատերազմին զոհուած այդ ընկճուած տղոցմէ ինչ արդիւնք կրնայ ստացուիլ։ Այդ Ալեքսանդրոբոլցի տղաքը կրնան Ամերիկեան կառուցական խումբերուն հաւատիլ գործնականութեան բարեկրթութեան և քաջութեան տեսակէտով։

Ամբողջ տարին, ամէն սկաուտ օրական պարտականութեան գլուխ է։ Ութսուն որբանոցներու ամէն մէկուն մուտքին առջեւ սկաուտ մը պահակ կեցած է ամբողջ օրը անծանօթները առաջնորդելու և անփափաքելի մարդերու մուտքը արգիլելու համար։ Որբանոցները վիթխարի բանակատեղի մը կը կազմեն և որուն սահմաններուն կը հակեն հայ սկաուտներ, և չեն թողուր որ փոքր տղաքը շրջին թափառական։ Սկաուտները ոստիկանի պարտականութիւն կը կատարեն։ Անցեալ տարի երբ ժանտախտ կը տիրեր Ալեքսանդրոբոլ քաղաքի մէջ, այս սկաուտները կը հակէին հակայ բանակատեղիին ութսուն դուռներու առջեւ, ամբողջ երկու ամիս, արգիլելով առանց պաշտօնական արտօնագրի ամէն մուտք և ելք։

Անոնք կը ջանան ամերիկացի սկաուտներուն նման ըլլալ, և ձգմարտիւ ունին այդ յատկութիւնները։ Իսկ գալով պիտոյքներու՞ն։ Այդ տղաքը ձմեռուան համար իրենց բաճկոնները և գլխարկները ծածկոցներէ (պաթանիէ) կը կարեն. իսկ ամառը կտաւէ բիճամաներ կը հագնին։ Անոնց կօշիկները որբանոցի արհեստանոցին մէջ կը պատրաստուի։ Ասիկա, դժուարին պայմաններու մէջ սկաուտութիւն կը նշանակէ։

Հայաստանի սկաուտներու ընդհանրութիւնը շուրջ 40000 է. Հոն տակաւին հաղարաւոր սկաուտներու նախանիւթ կայ։ Այդ երկիրը, պէտք է ձեզ ըսել, որ սկաուտներու կը կարօտի, և այդ տղաքը սկաուտութեան կը կարօտին։ Աստուած իմ, և որքան մեծ է իրենց այդ կարօտը։ Այդ երկրին մէջ իրենց համար աշխատութենէ և տառապանքէ տարբեր բան չ'կայ։ ուրեմն անոնց օգնենք որ սկաուտներ ըլլան։ Ի՞նչ կ'ըսէք։

Ամերիկացի սկաուտներէն կը խնդրուի օգնել հայ տղոց որ սկաուտ ըլլան, ինչպէս անոնց ծնողքները այդ տղոց կեանքը փրկելու գործը կատարած են։ Ահա օգնութեան միջոցներ։ Կրնանք դրամ տալ։ Ուրիշն չանինք ու տանք։ Բանէ մը գրկինք ինքզինքնիս և անոնց անանք խումբերով ընենք այս բանը։

Կրնանք հագուստներ, կապմածներ և ամէն տեսակ սկաուտական պիտոյքներ տալ։ Կրնանք գնել ու ղրկել և կամ մեր գործածելի հինները տալ։ Երկու ձեւն ալ սիրով կընդունուի հոն։ Ուրիշն այս բանը ընենք, մանաւանդ շուտ ընենք։ Որքան շուտ այնքան լաւ, որովհետեւ այդ հայ տղաքը կը սպասեն։ Երեւակայեցէք որ ձախ ձեռքով տրուած բարեւի մը եռեռէն այդ անկերպարանացած շրթները կը ջանան ժպտիլ ձեզ և կը խնդրեն իրենց օգնել որ սկաուտ ըլլան. այդ վիճակին մէջ ո՞րքան կրնաք զանոնք սպասցնել։ Իրր ամերիկացի սկաուտներ, այս ինդրին շուրջ ինչո՞ւ մեծ ամուկ մը չի կարենայ հանել։ ընենք այս բանը, և այնպիսի փութով մը որ Հայաստանը կենդանացնէ։

Անմիջապէս խօսեցէք ձեր խմբապետին։ Անոր ըսէք ձեր ինչ ընել կրցածը։ Անկէ խնդրեցէք խումբը հաւաքել կազմելու համար վերջնական յատակագիծ մը գործի սկսելու համար։ Ձեր խմբակը գործի մէջ դրէք։ «տղաք ըրէ՛ք», «հիմա ըրէ՛ք»։ Իրր խումբ, իրր խմբակ կամ իրր սկաուտ անհատ, ինչ ձեւով որ օժանդակել կուզէք, անմիջապէս հաղորդակցութեան մտէք Մերձաւոր Արեւելքի Ռիլիֆի Ընդհանուր քարտուղար Զարլզ Վ. Վիքրիի հետ, թիւ 151 Ֆիֆթ Աւընիւ, Նիւ Եօրք։ Անոր յայտնեցէք ձեր յատակագիծը։ Անկէ խորհուրդ հարցուցէք և անոր հաղցուցէք ինչ որ հաւաքած էք իրր արդիւնք ձեր ջանքերուն։ Կարելի եղածին չափ շուտով։

Բայց, վճռական բան մը ըրէք։ Հիմա, և մինչեւ վախճանի մը հասնելնիդ շարունակեցէք։ Այսպէս ահա՛։ Ցնցոտիներով պատուած հայ մանուկը ձեզմէ կ'սպասէ կատարել սկաուտական դաւանանքի չորրորդ հատուածը և երդման երկրորդ մասը։

Կը Խնդրուի Հայ Մամուլին արտատպել զայն։

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ թիւ շատոնց է մտադրած ենք հրատարակել սակայն կարգ մը դժուարութիւններ պատճառ եղան որ ուշացնենք զայն։

Պարունակութիւնը թէեւ շատ վտիտ, տակայն բաւական մը գաղափար կու տայ Մայր երկրի մէջ կատարուող աշխատանքի մասին։ Երեւանի գործունէութեան մասին կարելի չեղաւ ոեւէ գրութիւն կամ նկար ձեռք բերել։ Մենք վստահ ենք որ Գ. Օննիկ Եազմաճեան որ՝ որ մը մեզ գեղեցիկ անակնկալի առջեւ պիտի դնէ։ Մենք երախտապարտ ենք Ամերիկեան նպաստամատոյցին որ իր որբանոցներուն մէջ պարտադրած է սկաուտութիւնը եւ կարելի եղած չափով կը քաջալերէ այդ շարժումը։ Սակայն մենք Հայաստանի կառավարութենէն շատ բան կ'սպասենք։ Ինք համակիր է մեր մեր շարժումին։ Ինչպէս լսեցինք՝ Գ. Միասնիկեան իր մէկ պաշտօնագրին մէջ. Հ. Մ. Ը. Մ.ի օգտակարութիւնը շեշտեր ով տեղեկութիւն ուղած էր անոր մասին։

Մենք միշտ լաւատես ենք ներկայ կառավարութեան մասն մեր գործին գտնելիք ընդունելութեան մասին, քանի շարժումը քաղաքական բնոյթ չ'ունի եւ սկաուտական սկզբունքները համամարդկային են։ Մենք պատրաստ են գործելու հայրենիքին մէջ։

Խմբագրութիւն

Վարիչ-Խմբագիր
ԿԱՐՕ Գ. ՈՒՇԱՓԼԵԱՆ

Աշխատակից
ԳԱՌԼՕ ՇԱՇԻՆԵԱՆ

Գաղափարական-Տնօրէն
ՀՐԱՉԵԱՑ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Տպագրութիւն
Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԴԻ

[illegible]	[illegible]
1	[illegible]
2	[illegible]
3	33
4	49
5	65
6	81
7	97
8	113
9	129
10	145
11	161
12	177
13	193
14	209
15	225
16	241
17	257
18	273
19	289
20	305
21	321
22	337
23	353
24	369